



ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2012թ.

N 57-Ա

ք.Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԾԱՌԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՃԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1030-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված պետական անտառային ֆոնդում ծառերի ընթացիկ աճի ուսումնասիրության 2012 թվականի ծրագիրը՝ համաձայն N1և N2 հավելվածների:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՕԱՌԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՃԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ

1. Ծրագրի նպատակը

Հանրապետության պետական անտառային ֆոնդի տարածքում վերջին անտառաշինության աշխատանքները կատարվել են 1984 թվականին: Անտառաշինության աշխատանքների իրականացման ընթացքում անտառոտեսությունների (մասնաճյուղերի) աճող ծառուտների համար սահմանվել է ընթացիկ աճի ծավալը 1 հա վրա, որը սահմանվել է 1,4- 1,8 խ.մ.:

Ծրագրի նպատակն է աճող ծառուտների համար դաշտային ուսումնասիրությունների, կամերալ աշխատանքների շնորհիվ ճշտել ընթացիկ աճը 1 հա անտառածածկ տարածության վրա:

Նման աշխատանքներն իրականացվում են սովորաբար 10 տարի: Ելնելով անհրաժեշտությունից և մեր պայմաններից, ծրագիրը նախատեսվում է իրականացնել մինչև 2016 թվականը:

2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Ծրագրով նախատեսվում է պետական անտառային ֆոնդի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերի՝ Շահումյանի, Մարտակերտի, Հաղրուֆի, Քաշաթաղի և Ստեփանակերտի գլխամասային անտառապետություններում հատկացնել մինչև 100 փորձահրապարակ՝ 25x25մ; 50x50մ; 100x100մ մակերեսով՝ յուրաքանչյուր փորձահրապարակում ընդգրկելով առնվազն 200 ծառ: Ֆիքսելով հատկացված փորձահրապարակների կորդինատները, այդ ծառուտներում յուրաքանչյուր տարի մինչև 2016 թվականը կիրականացվեն ուսումնասիրություններ՝ կատարելով համապատասխան դաշտային չափագրումներ և կամերալ հաշվարկներ:

Դաշտային չափումների և կամերալ աշխատանքների շնորհիվ համապատասխան բանաձևերով կորոշվի աճն ըստ բարձրության, տրամագծի, ինչպես նաև կորոշվի ընդլայնակի կտրվածքի մակերեսի աճը:

3. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացումից հետո, որոշելով ընթացիկ աճը (ծավալը) 1 հա անտառածածկ տարածության վրա, հնարավորություն կունենանք ավելի հստակ որոշել պետական անտառային ֆոնդի բնափայտի պաշարը և օգտագործելով նախկին անտառաշինության այլ տվյալները՝ որոշել նաև շահագործման ենթակա պաշարը՝ ծառուտում բնափայտի այն քանակը, որը ենթակա է շահագործման, այսինքն՝ տարածքով, լրիվությամբ, ծառուտի վիճակով և այլ հատկանիշներով:

4. Պահանջվող ներդրումները

Պետական անտառային ֆոնդում 2012 թվականի ծառերի ընթացիկ աճի ուսումնասիրության ծրագրի իրականացման համար պետական բյուջեից ըստ նախահաշվի նախատեսվում է հատկացնել 4341,8 հազ. դրամ:

Հավելված N 2
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 « ____ » _____ 2012 թ.

N _____ որոշման

**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾԱՌԵՐԻ
 ԸՆԹԱՑԻԿ ԱճԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ**

Դ/Դ	Անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը	Ընդհանուր ծախսերը (հազար դրամ)	այդ թվում`		Ծախսերն` ըստ եռամսյակների			
					նյութերի արժեք (հազար դրամ)	աշխատավարձ (հազար դրամ)	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1.	Աշխատավարձ			645.0		645.0	90	185	185	185
2.	Գործուղում	օր	200	804.0	804.0	-	-	350	350	104
3.	Վառելիք (բենզին)	լիտր	2800	1200.0	1200.0	-	100.0	450	450	200
4.	Գործիքներ			300.0	300.0	-	-	200	100	-
5.	Համակարգիչ	հատ	1	400.0	400.0	-	-	400.0	-	-
	Ընդամենը			3349.0	2704.0	645.0	190.0	1585	1085.0	489.0
6.	Սոցիալական վճարներ (15%)			96.0	-	96.8	13.4	27.8	27.8	27.0
	Ընդամենը			3445.8	2704.0	741.8	203.4	1612.8	1112.8	516.8
7.	Չնախատեսված ծախսեր %			172.3	172.3	-	10.3	81.0	56.0	25.0
	Ընդամենը			3618.1	2876.3	741.8	213.7	1693.8	1168.8	541.8
8.	ԱԱՀ 20%			723.7	575.3	148.4	42.7	338.8	233.8	108.4
	Ընդամենը			4341.8	3451.6	889.2	256.4	2032.6	1402.6	650.2

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿԱՎԱՐ – ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԱՎԱԳՅԱՆ